ւորութեան կամ ամբողջ մրցանակը (500 ռ.) և կամ սորա մէկ մասը կընդունին։

6.—Գրաքննիչ յանձնաժողովն ամեն երկամեակ լրագիրների միջոցաւ կհրատարակէ իւր դատողութիւնքը մրցանակ գրաւող գործերի վերայ և կանխաւ կըյայտնէ թէ ում և յանուն որոյ առաքուելու են յաջորդ երկամեակի մրցանակին հետամուտ շարադրութիւնքը։

7.—Առաջին մրցանակը տրուելու է 1877 թ. սկզբում, իսկ միւսները հետզհետէ ամեն մի երկամեակ։

8.—Մրցանակի հետամուտ շարադրութիւնքը պարտին առաքուիլ իւրաքանչիւր երկամեակի ընթացքում մինչև յաջորդ մրցանակաբաշխութեան տարւոյ Յունվար ամիսը։

Ծանօթ. Առաջին՝ այս ինքն 1877 թ. մրցանակին մատչող շարադրութիւնքն ուղարկուելու են ի Պետերբուրգ Տէր Յովհաննէս քահանայ Պօղոսեանին՝ Невскій проспектъ, д. Армянской церкви.

St. Pétersbourg, Perspective de Newsky, maison de l'église Arménienne.

(Յաջորդ թերթի կթողումք այսպիսի գովելի և բարենպատակ Մրցանակի վերայ մեր մի քանի խօսքը)։

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ.

Բարեգործական ընկերութիւն Ռուսաց Աստրախանայ առաջի արար Հոգաբարձութեանս Ծըխական—Հոգևոր երկսեռ դպրոցաց Հայոց քաղաքիս զհ հարիւր յիսուն և եօթն ռուբլիս՝ կըցորդելով՝ թէ զայս գումար զկէս մասն հանեալ ի գոյացեալ դրամոց ի թատրոնական ներկայացմանէ, որ եղև միջնորդութեամբ Հայոց երիտասարդաց ի 14 Փետրվարի տարւոյս՝ նուիրեալ է յօգուտ Օրիորդական դպրոցի Հայոց քաղաքիս։

Ուստի Հոգաբարձութիւնս խնդրէ ի խմբագրութենէդ հրատարակել զայսպիսի ուսումնասիրական նուիրագործութեանց վերոյիշեալ Ընկերութեան նշանաւոր գումարոք՝ յէջս «Արարատ» ամսագրոյ ի գիտութիւն համայնից։

Հոգաբարձուք Ս. Պօպօվեանց
Սար. Բուրջալեանց
Գրիգոր Սողոմոնեանց

№ 13

Ի 11 Մարտի 1875 ամի
Աստրախան.

ՀԱՇԻՒ
ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԲԱԳՈՒԱՅ

Խմբագրութեան Արարատ ամսագրոյ

Խորհրդական Անդամք առաքելով ընդ սմին զհաշիւ գումարաց Մարդասիրական Ընկերութեան վասն 1874 ամի՝ խոնարհաբար խնդրեմ են թոյլ տալ տպագրել նորան Ձեր պատուական ամսագրի թերթերում ի գիտութիւն Անդամոց Ընկերութեան և ամենայն հասարակութեան Հայոց։

Նախագահ խորհրդոյ Խ. Բանանեանց
Անդամք խորհրդոյ Ներսէս Կրասիլնիկեանց
Գրիգոր Դիլդարեանց
Յակոբ Ալլէնեանց
Առաքել Մատուրեանց
Գրիգոր Այվազեանց
Գանձապետ Գրիգոր Թումանեանց
Ատենադպիր Ս. Վարշամեանց

15 Փետրվարի 1875 ամի
Ի Բագու։

(Հաշիւ մտից և ծախուց գումարոց Մարդասիրական Ընկերութեան յանուն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ի Բագուան 1874 ամի.)

ՄՈՒՏՔ.

Առ 1ն Յունուարի 1874 ամի մնացել էր ընկերապատկան գումար,